@rminco
Global telecommunications

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Արմինկո» ՍՊԸ կողմից Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարությանը
հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման վերաբերյալ

ՊԱԳՆ - 75

ք. Երևան 30-ը դեկտեմբերի 2011թ.

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Շահեն Ավագյանի, ով գործում է ՀՀ ԱԳ նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՄԻՆԿՈ» ՍՊԸ-ն, (այսուհետև՝ Կատարող), ի դեմս տնօրեն Արման Ներսիսյանի, ով գործում է «ԱՐՄԻՆԿՈ»-ի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կատարողը իրականացնում է հեռահաղորդակցության-տեղեկատվական, ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցումը: Ծառայությունները ներառում են՝

1.1.1. սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում (այսուհետ՝ Հավելված 1) սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան անհատույց մատուցվող ծառայությունները:

1.1.2. սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ում (այսուհետ՝ Հավելված 2) սահմանված սակագներին և որակին համապատասխան մատուցվող ծառայությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Կատարողի կողմից՝

2.1.2.1. Հավելված 1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություններ մատուցելու դեպքում.

ա) Չընդունել նման Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով այն՝ Հավելված 1-ում նշված տեխնիկական բնութագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ.

բ) վերը նշված «ա» կետում նախատեսված գործողությունների կատարման անհնարինության դեպքում՝ հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց:

2.1.2.2. Հավելված 2-ում նշված պայմաններին չհամապատասխանող Ծառայություններ մատուցելու դեպքում.

ա) Չընդունել այդ Ծառայությունը՝ պահանջելով այն՝ Հավելված 2-ում սահմանված պայմաններին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինում կամ սույն պայմանագրի 4.3. կետում նշված հաշիվների վերահաշվարկ, կամ

բ) պահանջել վերադարձնելու նման Ծառայության մատուցման ընթացքում Պատվիրատուի կողմից վճարված գումարը.

2.1.3. Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Հավելվածներ 1-ով և 2-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել են Ծառայությունների մատուցման ժամկետները:

2.2. **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Ընդունել Հավելված 1-ում նշված տեխնիկական բնութագրի համապատասխան մատուցված Ծառայությունների արդյունքը, իսկ Ծառայությունների մատուցման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Հավելված 2-ով սահմանված պայմաններին համապատասխանող՝ մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելու դեպքում ժամանակին Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

2.3. **Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու Հավելված 2-ով սահմանված պայմաններին համապատասխան մատուցված Ծառայության համար վճարման ենթակա գումարները:

2.4. **Կատարողը պարտավոր է՝**

2.4.1. Հավելված 1-ում և Հավելված 2-ում սահմանված պայմաններով ապահովել Ծառայությունների մատուցումը՝ ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ:

2.4.2. Սույն Պայմանագրի կատարման ապահովման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում՝ դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Հավելված 1-ով նախատեսված Ծառայության արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայությունների մասին իր կողմից ստորագրված արձանագրության երկու օրինակ:

3.2. Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, և պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն Պայմանագրով նախատեսված միջոցները:

3.3. Պատվիրատուն Արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված Արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4.1. Կատարողի կողմից Ծառայություններ մատուցման համար Պատվիրատուն վճարում է Հավելված 2-ի սակագներին համապատասխան:

4.2. Բոլոր հաշվարկները և վճարումները կատարում են ՀՀ դրամով:

4.3. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Վճարումներն իրականացվում են հետվճարային եղանակով: Հաշիվները տրամադրվում են Պատվիրատուին ամեն ամիս՝ Պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեով, իսկ բնօրինակներն ուղարկվում են փոստային ծառայության միջոցով: Պատվիրատուն վճարումները կատարում է հաշիվը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում: Եթե վճարումները չեն կատարվում 15 օրվա ընթացքում, Կատարողն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը՝ նախազգուշացնելուց 48 ժամ հետո: Պատվիրատուին տրամադրվող ծառայությունները վերականգնվում են պարտքի մարումից հետո՝ 3 ժամվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների մատուցման՝ սույն Պայմանագրի պահանջների պահպանման համար:
5.2. Պատվիրատուի կողմից, սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետը (մեկ տարին) չլրացած, սույն Պայմանագիրը լուծելու դեպքում, Պատվիրատուն պարտավորվում է վճարել Հավելված 1-ում նախատեսված Ծառայությունների մատուցման նպատակով Կատարողի ծախսած գումարները՝ դրանք հաստատող փաստաթղթերի համաձայն, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.3, 6 և 10.2 կետերում նախատեսված դեպքերի:
5.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:
5.4. Օրենսդրությամբ պահանջվող, սակայն սույն Պայմանագրով չնախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կողմերն պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.5. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ վեճերի լուծումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

Պատվիրատուի կողմից ուղարկված և ստացված ամբողջ տեղեկատվությունը մասնավոր է և գաղտնի, այն ենթակա չէ հրապարակման կամ որևէ երրորդ կողմին տրամադրման: Կատարողն ի վիճակի չէ ապահովել գաղտնիության ավելի բարձր աստիճան, քան հեռահաղորդակցության ցանցերում օգտագործվող ընդունված գաղտնիությունն է:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Սույն Պայմանագիրը կնքվում է անժամկետ: Պայմանագիրն ուժը չի կորցնում կողմերի վավերապայմանների փոփոխության, կողմերի հիմնադիր փաստաթղթերի փոփոխման, սեփականատիրոջ փոփոխման, կազմակերպական ձևի փոփոխության դեպքում:

9.2. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը կարող է փոփոխվել պայմանագրի կողմերից մեկի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել ծառայություն ստանալու պահանջը:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:
10.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:
10.3. Սույն Պայմանագրում փոփոխություններ (այդ թվում Հավելված 2-ով սահմանված սակագների) և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր Պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
10.4. Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ Պայմանագիր կնքած անձը:
10.5. Սույն Պայմանագիրը, այդ թվում հավելվածները, կազմված է 9 էջից, կնքվում է երկու բնօրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ բնօրինակ:
10.6. Կողմերից մեկի՝ սույն Պայմանագրից ծագած վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

11. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԱՐՄԻՆԿՈ» ՍՊԸ
ք.Երևան, Մաշտոց 51
(Իրավաբանական հասցե)

ք.Երևան, Իսահակյան 28
(Գործունեության հասցե)

Հեռ. 060270000
Ֆաքս. 060271111

ՀՎՀՀ 01501597
Հ/Հ 1570005315720100
«Ամերիաբանկ» ՓԲԸ

E-mail: support@arminco.com

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն #2
(Իրավաբանական և գործունեության հասցե)

Հեռ. +374 10 544041
Ֆաքս. +374 10 543925

ՀՎՀՀ 02527728
Հ/Հ 900011196095
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

E-mail: info@mfa.am

«ԱՐՄԻՆԿՈ» ՍՊԸ

Տնօրեն

Արման Ներսիսյան

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

Գլխավոր քարտուղար

Շահեն Ավագյան

«Արմինկո» ՍՊԸ կողմից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագիր

1-ին ՓՈՒԼ

1. Սույն Պայմանագրի կնքումից հետո առաջին ամսվա ընթացքում Կատարողը Պատվիրատուի հասցեում տեղադրում և գործարկում է նոր սերնդի ավտոմատ հեռախոսային կայան (ԱՀԿ), որի սեփականության իրավունքը սույն Պայմանագրով սահմանված ժամկետի (մեկ տարի) ավարտից հետո անցնում է Պատվիրատուին:

1.1. ԱՀԿ-ի տեխնիկական բնութագիրը ներկայացված է Հավելված 1.1.-ում:

1.2. ԱՀԿ-ի օգտագործվող հեռախոսային մուտքերի (պորտերի) քանակը Պատվիրատուի հասցեում կազմում է 300, ամեն մի մուտքին հատկացվում է 06062xxxx համարակալման շարքից մեկ չկրկնվող համար:

1.3. Կատարողն ապահովում է «Արմենտել» ՓԲԸ-ի 8 մուտքային գծերի միացումը ԱՀԿ-ին: Նշված 8 հեռախոսահամարների սպասարկման գումարների համար Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում:

1.4. Կատարողի կողմից Պատվիրատուին տրամադրվում է 220 չկրկնվող համար՝ 06062xxxx համարակալման շարքից:

1.5. ԱՀԿ-ն ապահովում է հանրային օգտագործման փաթեթային ցանցերի (Ինտերնետի) միջոցով << դիվանագիտական ներկայացուցչություններում տեղադրված, SIP արձանագրությամբ աշխատող մինչև 300 հեռախոսների միացումը Պատվիրատուի ներքին ցանցին՝ ունենալով 06062xxxx համարակալման շարքից մեկ չկրկնվող համար: Դիվանագիտական ներկայացուցչություններին տրամադրվող համարների քանակը որոշվում է ըստ համապատասխան դիվանագիտական ներկայացուցչություններին համակարգին միացնելուն և համարներ տրամադրելուն զուգընթաց:

1.6. Լրացուցիչ համարների տրամադրումը կամ գործող համարների քանակի պակասեցումը կատարվում է Պատվիրատուի կողմից Կատարողին ուղղված գրավոր դիմումի հիման վրա:

1.7. Պատվիրատուին անհատական համարներ տրամադրելու ընթացքում պակասող հեռախոսային ապարատները (այսուհետ՝ հեռախոս) տրամադրվում են Կատարողի կողմից՝ համաձայն սույն Հավելվածի 2.1. կետի պայմանների:

1.8. Կատարողն անհատույց ապահովում է ԱՀԿ-ի տեղադրումը, կարգավորումները և համապատասխան մասնագետի ուսուցումը: Առավել բարդ խնդիրներ առաջանալու դեպքում Կատարողն անհատույց տրամադրում է տեխնիկական աջակցություն՝ առանց ժամկետային սահմանափակման:

1.9. ԱՀԿ-ի համար Կատարողը տալիս է 2 տարվա երաշխիք, որի ընթացքում առաջացած բոլոր խնդիրները կարգավորվում են Կատարողի կողմից:

2-րդ ՓՈՒԼ

2. Պատվիրատուի ներքին ցանցային նոր համակարգի տեղադրումից հետո Կատարողը իրականացնում է SIP արձանագրությամբ աշխատող հեռախոսների տեղադրումը և կարգավորումը:

2.1. SIP արձանագրությամբ աշխատող հեռախոսները, ըստ սույն Հավելվածով սահմանված համարների քանակի, Պատվիրատուին անհատույց տրամադրվելու են Կատարողի կողմից՝ համաձայնեցնելով համագործակցության պայմանները և դրանք, որպես Հավելված, կցելով սույն Պայմանագրին:

2.2. Դիվանագիտական ներկայացուցչությունների սույն Հավելվածի 1.5. կետով նախատեսված միացումները սկսվում են իրականացվել գործարկումից հետո:

2.3. Դիվանագիտական ներկայացուցչություններում SIP արձանագրությամբ աշխատող հեռախոսների ձեռք են բերվում Պատվիրատուի կողմից:

«ԱՐՄԻՆԿՈ»
ARMINCO
01501697

Հավելված 1.1

Ավտոմատ հեռախոսային կայանի տեխնիկական բնութագիրը

- XORCOM ընկերության հիմանական «TwinStar 3000 Failover PBX» ԱՀԿ-ն իրենից ներկայացնում է զույգավորված երկու ԱՀԿ, որոնցից մեկն ապահովում է ընթացիկ աշխատանքը, իսկ մյուսը միացված վիճակում գտնվում է հերթապահ ռեժիմում: Առաջին ԱՀԿ-ի աշխատանքի խափանման դեպքում անմիջապես սկսում է աշխատել հերթապահ ռեժիմում գտնվող երկրորդ ԱՀԿ-ն:

- Astribank USB Channel Bank 16 FXO, 1U Case - սարքն ապահովում է 16 մուտքային պորտ պարունակող մուտքային զանգ ընդունող սարք:

- Astribank USB Channel Bank 32 FXS, 1U Case - սարքն ապահովում է 32 ներքին հեռախոսահամարի պորտ պարունակող սարք: Նախատեսվում է 8 այդպիսի սարք՝ ընդհամենը 256 ներքին հեռախոսահամար ունակությամբ:

- Hardware Echo Canceler Including 32 Channels - ապահովում է արձագանքի ճնշում՝ ապարատային մակարդակով, տեղադրվում է FXO/FXS բոլոր սարքերի մեջ:

- Redundant Power Supply Base unit, 1U Case, Power Supply Unit for RPS - անխափան սնուցման աղբյուր՝ իր պահեստային սնուցման աղբյուրով:

Ներառված են նաև ԱՀԿ բաղադրիչները միացնող լարեր և կոմուտացիոն հաբեր:

ԱՀԿ-ն ապահովում է 500 բաժանորդի միացման հնարավորություն, որոնցից 256-ը միացվում են հեռախոսալարերով, իսկ մնացածը՝ SIP արձանագրությամբ աշխատող հեռախոսասարքերով: SIP հեռախոսասարքերը հնարավոր է տեղադրել ցանկացած վայրում, ապահովելով նրանց Ինտերնետ միացում, որի միջոցով այդ հեռախոսասարքերը դառնում են ներքին ԱՀԿ բաժանորդ: ԱՀԿ-ն ունի կիրառվող ձայնային կոդեկների միջոցով ձայնի ձևավորում, մասնավորապես՝ G.729, G711, GSM:

Մանրամասն տեղեկությունների հնարավոր է ստանալ www.xorcom.com կայքում: Աղյուսակում ներկայացված է տեղադրվող սարքավորման ցանկը իրենց ֆիրմային համարներով:

XORCOM
Asterisk*-based PBX Solutions

Teradyon, POB 60, D.N. Misgav 20179, Israel
Telephone - 972-4-9990285. Fax - 972-4-9990287
info@xorcom.com www.xorcom.com
L.T. No.: 513543736

#	Item No.	Description	Quantity
1	TS3000	TwinStar 3000 Failover PBX	1
2	XR0010/1U	Astribank USB Channel Bank - 16 FXO, 1U Case	1
3	XR0008	Astribank USB Channel Bank - 32 FXS, 1U Case	7
4	XR0034	Telecom Connection Option - 3m cable for 1U Case	7
5	XR0124	Hardware Echo Canceler Including 32 Channels	8
6	XR0034	Telecom Connection Option - 3m cable for 1U Case - Separate Kit	2
7	XR0124	Hardware Echo Canceler Including 32 Channels - Separate modules	2
8	XR0067	Rapid PA	1
9	XR0108	Redundant Power Supply - Base unit, 1U Case	1
10	XR0109	Power Supply Unit for RPS	1
11	XR0106	Internal 4 Port USB Hub Module for Redundant Power Supply	4

<u>Հավելված 2</u>

ՀՀ արտաքին գործերի նախարարությանը տրամադրվող հեռախոսակապի ծառայությունների սակագները*

1. Սակագները.

1.1. Գործում է Պայմանագրի կնքելուց հետո առաջին տարվա ընթացքում.

- մեկ համարի ամսական վարձ - 3600 դրամ
- մեկ SIP արձանագրությամբ գործող համարի ամսական վարձ - 360 դրամ
- 1 րոպե հեռախոսակապ Պատվիրատուի համարների միջև - 0 դրամ
- 1 րոպե հեռախոսակապ դեպի այլ օպերատորների ֆիքսված կապի ցանցեր - 5 դրամ
- 1 րոպե հեռախոսակապ դեպի ՀՀ բջջային ցանցեր - 17 դրամ
- 1 րոպե հեռախոսակապ ՀՀ միջքաղաքային - 14 դրամ
- 1 րոպե միջազգային հեռախոսակապ - ներկայացված է www.arminco.com կայքում և համապատասխանում է գործող ելքային ծառայություններ մատուցող ընկերությունների սակագներին:

1.2. Գործում է Պայմանագրի կնքելուց հետո առաջին տարվա ավարտից հետո.

- մեկ համարի ամսական վարձ - 360 դրամ**
- մեկ SIP արձանագրությամբ գործող համարի ամսական վարձ - 360 դրամ
- 1 րոպե հեռախոսակապ Պատվիրատուի համարների միջև - 0 դրամ
- 1 րոպե հեռախոսակապ դեպի այլ օպերատորների ֆիքսված կապի ցանցեր - 5 դրամ
- 1 րոպե հեռախոսակապ դեպի ՀՀ բջջային ցանցեր - 17 դրամ
- 1 րոպե հեռախոսակապ ՀՀ միջքաղաքային - 14 դրամ

1 րոպե միջազգային հեռախոսակապ - ներկայացված է www.arminco.com կայքում և համապատասխանում է գործող ելքային ծառայություններ մատուցող ընկերությունների սակագներին:

2. Կապի որակին վերաբերող դրույթներ

2.1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ ֆիքսված և բջջային ցանցեր ելքային ու մուտքային զանգերի որակը պիտի համապատասխանի ՀՀ գործող և միջազգային ընդունված ստանդարտներին:
2.2. Դեպի արտերկրներ կատարվող ելքային և մուտքային զանգերի որակը պիտի համապատասխանի ՀՀ գործող և միջազգային ընդունված ստանդարտներին:

«ԱՐՄԻՆԿՈ» "АРМИНКО" "ARMINCO" 01501597

* Սույն Հավելվածում ներկայացված [illegible] ներառում են ավելացված արժեքի հարկը, Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:
** Եթե սույն Պայմանագրի Հավելված 1-ի 2.1. կետով այլ պայմաններ չառաջանան: